

4. Զննախօսական եղանակ

Բարոյագիտութեան հիմնաւորման վերջին, *քննախօսական* (Discursive) եղանակը կ'օժանդակէ նախորդ եղանակներուն, ինչպէս նաեւ կը լուծէ անոնց հարցերը: Քննախօսական եղանակը դուրս գալով բարոյագիտութեան հիմնաւորման վերլուծական, մեկնաբանական եւ անդրանցական եղանակներու մակարդակէն, կը փորձէ բարոյական հիմնաւորում մը ներկայացնել ներենթակայական (Intersubjective) փաստարկներու խօսոյթով, հետեւելով գերման երկու ժամանակակից փիլիսոփաներուն՝ **Ապելի** (Karl-Otto Apel, 1922 – 2017 թ.) եւ **Հաբերմասի** (Jürgen Habermas, *1929 թ.) եւ նպատակ ունենալով բարոյական կանոններու ընդհանրականացումը, այսինքն՝ բոլորին կողմէ ընդունումը:

Որպէս եզրակացութիւն կարելի է շեշտել, որ բարոյագիտութեան հիմնաւորման ծրագիրը, պէտք է ունենայ տոկոս, ապահով ու անսխալական հիմք, ինչպէս նաեւ զինուած ըլլայ կասկածապաշտութեան եւ յարաբերապաշտութեան դէմ մերժման կարելիութիւններով:

Շեշտելով բարոյական անսխալականութեան (Infallibilism) ուղիին, նախ կը տեսնենք, որ անսխալականութիւնը շատ կը յարմարի՝ *հիմնականապաշտութեան* (Fundamentalism), որովհետեւ այս երկու պարագաներուն ալ այն համոզումը կը տիրէ, որ սկզբունք մը բոլորովին անսխալական է կամ հիմք մը միակ ճշմարտութիւնը կը ներկայացնէ: Ուրեմն բարոյագիտութեան համար *հիմնականապաշտութիւնը*, դէպի անսխալականութիւն տանող գլխաւոր ուղին է:

Հիմնականապաշտութիւնը (Fundamentalism), իր կարգին, որպէս բարոյագիտութեան հիմնաւորման ծրագիր կարելի է բաժնել երկու մասերու.-

1. Բարոյագիտական վերջնական հիմնաւորում

(անգլ.՝ Ultimate Grounding, գերմ.՝ Letztbegründung),

որ կը յատկանշուի իր ապահով, բացարձակ, ճշմարիտ, ստոյգ ու վերջնական ըլլալու հանգամանքներով եւ կասկածապաշտութեան (սկեպտիկութեան) ու յարաբերապաշտութեան հանդէպ՝ մերժման կարելիութիւններով: Հիմնաւորման այս ձեւին կը պատկանին, գերման երկու փիլիսոփաներու՝ Կանտի *պարտագիտական բարոյագիտութեան*⁽⁵¹⁾ (Deontological Ethics) տեսութիւնը եւ Ապելի *քննախօսութեան բարոյագիտութեան*⁽⁵²⁾ (Discourse Ethics) տեսութիւնը:

(51) **Պարտագիտական բարոյագիտութիւն** (Deontological Ethics) տեսութեան մասին, տե՛ս Մաս – 5, Էջ 160: **Պարտագիտութիւն** հասկացութեան մասին, տե՛ս նաեւ Մաս – 9, Էջ 518:

(52) **Քննախօսութեան բարոյագիտութիւն** (Discourse Ethics) տեսութեան մասին, տե՛ս Մաս – 5, Էջ 218: **Քննախօսութիւն** հասկացութեան մասին, տե՛ս նաեւ Մաս – 9, Էջ 526: